ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ Ի. Վ. ՍՏԱԼԻՆԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ

ԳՐՈՖ. Հ. ԱՃԱՌՅԱՆ

(Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ)

ԻՄ ԷԼ ԽՈՍՔԸ

Շատերը խոսեցին, շատերը գրեցին, ես էլ ասում եմ իմ սրտի խոսքը Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինի վշտալի մահվան առթիվ։

Մենք, լեզվաբանական գիտության համեստ հետևորդներս, ստեղծագործական լայն ուղու վրա կանգնեցինք այն օրից, երբ գիտության կորիֆեյ հանճարեղ Ստալինը ջախջախեց մառական սխոլաստիկան և գիտական նոր լեզվաբանությունը գիտության գահի վրա դրավ։ Ամենքս էլ երախտապարտ ենք իրեն։ Ես իմ երախտագիտական պարտքս հատուցանելու դիտումով, իմ կյանքի յոթանասուն յոթը տարիների պտուղը՝ Լիակատար Քերականությունը ձոնեցի իրեն։ Անշուշտ այս համեստ ձոնս ոչ մի ճառագայթ չպիտի ավելացներ իր անվան, բայց իր անվան հիշատակությունը դափնյա պսակ պիտի լինի իմ գրքի 12 հատորների ճակատին, իբրև անջնջելի հիշատակ իմ երախտագիտական զգացմունքների։

ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆ

(Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ)

ՄԵՐ ՍԻՐԵԼԻ ԱՌԱՋՆՈՐԴԸ ՄԵԶ ՀԵՏ Է

Մեր մեծ և հանճարեղ ընկեր Ստալինի կորուստը ամբողջ Սովետական Միությանը, ամբողջ աշխարհի աշխատավոր և պրոգրեսիվ մարդկությանը ձգեց խոր վշտի մեջ։

Ոչ միայն չես կարող հաշտվել զարհուրելի փաստի հետ, այլ նույնիսկ չես կարող հասկանալ, ըմբռնել այն, որ մեզանից ընդմիշտ հեռանում է նա, ով տարիների ընթացքում ապրել է մեր մտքերի ու երազանքների մեջ։ Ստալինը ամենահեղինակավոր անձն է բովանդակ աշխարհում, ամենապանծալի և ներշնչող անունը, որ հնչում է երկրագնդի բոլոր մասերում, ուր շահագործում կա և ստրկացում, ուր պայքար կա ընդդեմ բռնության, շահագործման, ստրկացման։

Ստալինը համաշխարհային պատմության սակավաթիվ մեծություններից մեկն է՝ մարդկության հետ հարատևող։ Նա ինքը, մեծ Լենինի հետ, ստեղծեց մի նոր պատմություն, մի նոր աշխարհ, մարդկային արդար փոխհարաբերությունների երազած աշխարհը։

Այսպիսի մեծություններին երբեք մահ չկա։ Մահը Ստալինի էության հետ երբեք համատեղելի չէ։ Ստալինը անմահ է Լենինի պես, Ստալինը անմահ է Լենինի հետ։

Նա Լենինի հետ ստեղծեց Կոմունիստական պարտիան, դաստիարակեց և կոփեց նրան։ Նա Լենինի հետ ղեկավարեց Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլուցիան, մի անանախընթաց ռևոլուցիա, որ ամբողջ աշխարհն

առավ իր փրկարար լույսերի մեջ և ազատեց ցարական դաժան ռեժիմին ենթարկված ժողովուրդներին։ Նա փրկեց հայ ժողովրդին վերջնական բնաջնջումից, որ թյուրք բարբարոս պետությունը իր անգլո-ամերիկյան տերերի թելադրանքով հրով ու սրով ի կատար էր ածում։

Ցարական դաժան կարգերից ազատագրված ժողովուրդները ստացան ազգային վերածննդի հնարավորություն, ծաղկեց և բարգավաճեց ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական նրանց կուլտուրան։

Սովետական ժողովուրդները մեծ սգի մեջ են։ Հայ ժողովուրդը սգում է մահն իր ազատարարի, որին երախտապարտ է հավիտյան։ Սակայն ժողովուրդները գիտեն, որ իրենք մենակ չեն, որ մեր իմաստուն առաջնորդը միշտ մեզ հետ է, նա ներկա է մեր վերելքին ամեն տեղ և մեզ ոգեշնչողն է։

Նա ներկա է կոմունիզմի հոյակապ կառուցումներին և խրախուսիչ հայացքով նայում է ամեն մի աղյուսին, որ դրվում է մի որևէ տեղ մեծ Միության մեջ։

Մենք մենակ չենք մեր ջանքերի ու պայքարի մեջ։ Մենք առանց Ստալինի չենք. նրա ստեղծած Կոմունիստական հզոր պարտիան մեզ հետ է։

Ստալինի հիշատակը նվիրական է մեզ համար, և մենք խորապես հարգած կլինենք նրա հիշատակը, երբ անվրեպ կենսագործենք նրա պատգամները, նրա ավանդները, նրա ուսմունքը, երբ անձնվիրաբար գլուխ բերենք այն մեծ և պատմական ծրագրերը, որ դծել է նրա հանճարեղ միտքը։

Ստալինի դրոշը նվիրական է, դա ազատության, ժողովուրդների եղբայրության և համաշխարհային խաղաղության դրոշն է։ Բոլոր սովետական ժողովուրդներս, մի սիրտ և մի հոգի Կոմունիստական պարտիայի հետ, հավատարիմ մնանք այն անպարտելի դրոշին։

Գ. ՂԱՓԱՆՑՅԱՆ

(Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ)

ՄՏՔԻ ՏԻՏԱՆԸ

Մեզանից հեռացավ մի մարդ, որի նման մարդիկ քիչ են ծնվում, որ դարերի պատմությունն են խտացնում իրենց մեջ և իրենց արդարացնում են այդ պատմության առջև։ Լինելով իրենց դարի զավակները, այդպիսի հսկաները կարողանում են հեռուն տեսնել և ապացուցել այն բոլորը, որ շատերին թվացել է սոսկ փորձ կամ հնարավորություն։ Անմահ Լենինի նման ընկեր Ստալինը ո՛չ միայն գիտական մարքսիզմի ստեղծարար կրողն էր, այլև զարգացնողն ու կյանքում գործադրողը՝ միանգամայն նոր պայմաններում։ Լենինի հետ միասին ընկեր Ստալինը նշեց նոր ուղիներ, ստեղծեց նոր, պրոլետարական պետություն, ապացուցեց պատմության առջև, որ սոցիալիզմը ո՛չ թե տեսություն է և աշխատավորության բաղձանքը, այլ իրականություն, որը, հակառակ մի շարք «մարքսիստների»ի, հնարավոր եղավ մի պետության սահմաններում և այժմ տարածվում է ավելի հեռուները։

Ընկեր Ստալինը, շարունակելով մեծ Լենինի անմահ գործը, դրեց և հանճարեղորեն լուծեց մեր Հայրենիքի համար կենսական նշանակություն ունեցող բազմաթիվ պրոբլեմներ։ Բավական է հիշել մեր երկրի ինդուստրացման և գյուղատնտեսության կոլեկտիվացման պրոբլեմները։ Իր հաջող իրականացմամբ գյուղատնտեսության կոլեկտիվացումը, որն այժմ այդքան բնական ու սովորական է մեզ համար, և այդ հիման վրա կուլակության ոչնչացումը որպես դասակարգ, խոշորագույն ռևոլուցիոն հեղաշրջում էր, մի հեղաշրջում, որն իր հետևանքներով Հոկտեմբերյան ռևոլուցիային հավասար նշանակություն ունեցավ։ Նման հեղաշրջումներ մեր առօրյայում, մեր հոգեբանության, մորալի, ըմբռնումների և այլ կողմերի մեջ շատ-շատ են։ Եվ այժմ թվում է, որ այդպես էլ միշտ եղել է. այնինչ այդ բոլորի մեջ մեծ դեր է կատարել մեծ Ստալինի անմիջական մասնակցությունը։ Հիշենք միայն վերջին երկու տարվա նրա ստեղծարար մասնակցությունը լեզվաբանության և տնտեսական պրոբլեմների լուծմանը, հիշենք նրա դերը գրականության և արվեստի զարգացման բնագավառում։

Պատմության առջև, որպես ռեալ փաստ, ստեղծվեց սոցիալիզմը մեր երկրում։ Դա ընկեր Ստալինի և Կոմունիստական պար-